


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քրոքիւն
պէս ք ե ուղղել առ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԶԱՐՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրի քաղաքի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օստի քաղաքի համար տեղի. 25
» » վեցամսեայ » 14
Թղթարարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կախալ գրութիւն եւ չի տրուիր :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՌՈՒՆՔ

Փրանսական հանդէսի մը մէջ հրատա-
րակուած յօդուած մը, որ հեղինակութիւն
ունեցող գրչէ մը ելած ըլլալ կերեւի, եւրո-
պական դիւանագիտութեան ձախողումներն
ու պարտութիւնը քննելով՝ անոր պատճառը
կը գտնէ միջազգային իրաւունքի սկզբունքնե-
րուն կարեւորութիւն չի տրուելուն մէջ: Վեց
տէրութիւնները որոնք կը խօսին, կը հրամա-
յեն, կը շինեն ու կը քանդեն յանուն եւրո-
պայի, անոր մեծամասնութիւնը միայն կը
ներկայացնեն, կըսէ, բայց ոչ ամբողջութիւնը:
Այսօր եւրոպայի մէջ, մեծ ու պզտիկ, քրտն-
երկու տէրութիւններ կան, որոնց տասներ-
միապետական ու երեքը հանրապետական.
ինչո՞ւ չի յարգուի ամենուն ալ ձայնը, նոյն
իսկ եթէ կուզուի ընդհանուր շփոթութիւննե-
րու առաջին առնել: Վեց տէրութիւններէ
իրաքեանիւրն իր ըմբռնումին և յաճախ իր
չահուն համաձայն կը մեկնէ միջազգային ի-
րաւունքը:

Այս իրողութիւն երեւան եկաւ այն ծան-
րակշիռ դէպքերուն առթիւ որոնք հարկադ-
րեցին եւրոպան միջամտել Թուրքիոյ մօտ, նախ
ստիպելու համար զայն որ մարդկային պար-
տականութիւնները կատարէ իր քրիստոնեայ
հպատակներուն հանդէպ, յետոյ զայն պաշտ-
պանելու ելաւ՝ բուն իսկ իր յանցանքներու հե-
տեանքներուն դէմ: Զեղըրութեան ու ան-
կողմնակալութեան երեւոյթին տակ, վերջ ի
վերջոյ անոր կողմը բռնեց, առանց գտնէ իր
կարծիքներուն քաջութիւնն ունենալու, այլ
պարտելով զանոնք:

Ի՞նչ իրաւամբ և սկզբունքով, օրինակի
համար, Թուրքիան ահաբեկելու սին յոյսով՝
Յունաստանը ձեռքի տակէ քաջալերելէ ետք,
պատերազմը ծագելուն պէս յանկարծ այս
վերջինին դէմ ձեռք առին ամենախիստ մի-
ջոց մը զոր «խաղաղասիրական պաշարում»
անունով մկրտեցին: Պաշարումը թշնամական
արարք մըն է միշտ և երբէք խաղաղասիրա-
կան հանգամանքով ճանչցուած չէ միջազգա-
յին իրաւունքի սկզբունքներուն մէջ:

Յետոյ, ինչո՞ւ Կրէտէն չէզոքացուցին պա-
տերազմի ատեն. իրենց խօսքով, այդ կղզին
աւանդ մըն էր զոր կը ստանային, մինչև պա-
տերազմին վախճանը հաւատարմաբար պահե-
լու համար: Բայց իրապէս, զրաւում մըն էր

զոր կը կատարէին, միջազգային նաւատորմին
միջոցաւ. երաշխաւորութիւն մը զոր եւրոպա
ձեռք կը ձգէր, իր ուսերուն վրայ գտնուած
բեռը չի ծանրացունելու ակնկալութեամբ, որ
ի դերեւ ելաւ սակայն: Ամէն պարագայի մէջ,
այդ երաշխաւորական աւանդը ո՞ր և է իրաւունք
չէր տար իրենց՝ Յունաստանի դէմ շարժելու,
ինչ որ ըրին. անուրանալի է որ հեղին նա-
ւատորմը գերազանցապէս զօրաւոր էր թշնա-
մին ծովային ուժերէն. եւրոպա, Կրէտէն
պաշտպանելով, Յունաստանի ձեռքէն կորզեց
յաղթութեան միակ յոյսը որ կը մնար անոր:

Հայաստանի կտորածներէն սկսելով մին-
չեւ թուրքահայկերական հաշտութեան բանակ-
ցութիւններն իրարու յաջորդող դէպքերը ցոյց
կուտան դժբաղդաբար թէ միջազգային իրա-
ւունքի սկզբունքները ոտնակոխ ըլլալու վտան-
գին մէջ են, — սկզբունքներ սրտք պզտիկին
ու տկարին իրաւունքը պէտք է ապահովելին
և որոնք յանձնուած են մեծերէ ու զօրաւոր-
ներէ կազմուած միջազգային ատենի մը մի-
ակողմանի վճռին: Այդ մարմին պարզապէս
իր քաղաքական շահերը կը հասկնայ droit
des gens ըսելով:

Եւ ի՞նչ բանի կը ծառայէ անշահախն-
դիր օրէնսդէտներու աշխատութիւնը որոնք
հետամուտ են միջազգային իրաւունքի օրի-
նադրի մը հիմերն հաստատել, մարքելով
զտելով ինչ որ պատմութիւնն անգիտակցա-
բար նուիրագործած է, երբ անդին դիւա-
նագէտները կախատին գործնականապէս ըն-
դունիլ տալ հինցած օրինադիրը մը որուն
սկզբունքն է՝ տկարներուն հնազանդութիւնը
զօրաւորներու կամքին:

ԵՕԹԸ ԹԻՒԸ

Դիտած էք թէ եօթը թիւը նշանաւոր, գրեթէ
հմայական թիւ մըն է:

Շարաթը եօթը օրերէ կը բաղկանայ, հին աշ-
խարհի եօթը հրաշալիքները և եօթը խմաստունները
ամէն մարդ գիտէ, Աստուածածին եօթը խոյ ունէր
և մարդիկ եօթը մահացու մեղք ունին. Աստուծոյ
քով երթալու համար եօթը երկինքէ անցնելու է,
իսկ Սատանան տեսնել ուզողը եօթն անգամ գետ-
նին տակը պէտք է անցնի: Եթէ բոլոր հին ու նոր
եօթը թուով նշանաւոր բաները յիշել ուզենք հոս,
եօթը բուճքո տառերով եօթը սիւնակ հարկ կըլլայ
ընցնել, ուստի առ այժմ խօսինք միայն նորագոյն
նշանաւոր եօթնեակին վրայ զոր Օրմանեան Պատ-
րիարքը կ'ընծայէ մեզի. — այն է՝ Արմաշի Դպրեվան-
քին եօթը նորոնծայ վարդապետները:

Ամիսներէ ի վեր օր չանցնիր որ այդ նորոնծա-
ներու մէկ քանիին անունը չկարդանք պոսական
թերթերուն մէջ: Ամէն տեղ կերթան, ամէն բանի
կը խառնուին:

Շրջուն քարոզիչ պէտք է, նորոնծայ մը գա-
ւազանը կանգնէ, ճամբայ կելայ:

Մատենադարանի Յանձնարարութիւնը կը կոչուի,
նորոնծայ մը կերթայ վարելու Յանձնարարին աշ-
խատութիւնները:

Պատրիարքական ժողովարարը հիւանդ է. —
«Դուն հանգիստդ նայի՛, կըսէ՛ նորոնծաներէն մին,
ես հոս եմ». ու կը բազմի թիկնաթոռին մէջ:

Ամերիկայէն ատաղնորդ կ'ուզեն, նորոնծայ
Մաշիոյ վարդապետ չանքան կը կառէ ու կը նետ-
ուի չոգեհաւ:

Կիարոսէն կը գրեն Պատրիարքարան. «Մեզի
այցելու հովիւ մը զրկեցէ՛ք». նոսալը դեռ Պոլիս չի
հասած՝ Դպրեվանքի նորոնծայներէն մին արդէն կը
հասնի Նիքոսիա:

Իզմիրեանց մրցանակ կ'առ. նորոնծայ մը կը ներ-
կայանայ, ձեռքը տետրակ մը, մրցանակը կանգնէ
ու կերթայ Ֆէնէա Յունաց Պատրիարքին օրպիտու-
թիւնը հարցունելու, յետոյ կանցնի Նիկոմիդիա թե-
մական գործերուն մէջ ատաղնորդին օգնելու, այս
առթիւ քանի մը վայրկեան Արմաշի Դպրեվանքին
դեր-տնօրէնի պաշտօնը կը վարէ, յետոյ կը նետ-
ուի չոգեհաւ, կը դառնայ Պոլիս, Պէտլիք-Տէրէի ե-
կեղեցին քարոզ մը կը խօսի, կանցնի Քում-Քարու,
կը տեսնէ որ Կատաստանական խորհուրդին մէջ
ատենապետի աթոռը պարտաւ է, կը նստի վրան՝
թէ՛ յոգնութիւն առնելու և թէ՛ նստին նախադա-
հելու համար:

Այսպէս ուրեմն այդ նորոնծաները տեսակ մը
բանտէ կամ ամէն առթիւ ընծայելի տարանք մը
դարձած են. Սարսաբանէլի օշարակ, յիշատակի
բառթիւ կամ Սինկերի կարի մեքենան...:

Հիւրընծայ վարդապետները իրաւունք ունին բար-
կանալու իրաց այս վիճակին: Ես եթէ իրենց տե-
ղը ըլլայի՝ անմիջապէս խալիփա կը նետելի մէկ
կողմ ու կերթայի... Պարբէշ:

Ս. ԺԻՐԱՅՐ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

«Մեշկերէք»-ի ծանօթ դասը, որուն յե-
սածգման վերաբերող յարեքը սխալ էին,
օգոստոս 9ին տեսնուեցաւ Բարիզի պատժա-
կան Զոյ աւետիսին առջեւ: «Երանի՛ թէ չի
տեսնուէր» մեծեղին անշուշտ զայն գրգռող-
ները. այդ դասավարութեան միջոցին ուր
յաւելցան Ռօշտօրի ու Բիշմանայի պէս նշա-
նաւոր հրապարակագիրներու վկայութիւն-
ներն ի նպաստ թերթին խմբագրութեան,
որիչ քան երեւան լեկաւ քայց թէ Ժէօն-
Թիւրքի կուսակցութեան օնկանին յողով-
ներն ու ֆեմալիստներն իրենց ար-
դի վարչական դրութեան դեմ՝ արդար էին:
«Էմքրանսիսի»-ի խմբագրապետն անշուշտ

ՀՈՂՍԱՀԱՐԸ

(ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԻ ՈՒԹԻՒՆ)

Դեռ մեղքը գործուած չէր:

Տիպար ամուր, առաջին զոյգը, իր անփորձութիւնը եւ մեղքիւրիւնը կը պարզեցնէր եղբորն ընդարձակութեան մէջ:

Աղամ եւ եւա collageի ծրագիրը կը պատահէին հովանաւոր ծառերու շուրջը:

* *

Մայիսի առաւ ամիսը:

Նախամարտերը լնակի մը եղբորն ընկողմանաւ, անուշ բաներ կըսէին իրարու:

Միշտ մը եւա ոսփի վրայ ելաւ մագերէ օրս կելու համար:

Գեղանի եր մա ինչպէս երբեք կին մը չէ եղած:

* *

Սասանան հեռուէն կը դիտէր զանոնք:

—Աստուծո՛ւ ետք, տեսնենք մէջ դուռն աւանդէ գեղեցիկն ես, ըսաւ Աղամ եւային:

Պանանի ծառի մը փոխին էին:

* *

Եիկնեցաւ եւա, եւ իր շինուած ու գոհունակութիւնը ծածկելու համար, այդ լայն տեսլանքէն հաս մը բացուց եւ անոր ետին ապաստանեց իր ժպտուն դէմքը:

Այդ օրէն ի վեր կիները ընդունեցին հողմաւ հարի գործածութիւնը:

ՓԱՏԱՄԵՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ կայսրութեան մասին եւրոպական Սուրհանդակին բերած լուրերը կը շարունակեն մտահոգութիւն պատճառել. հալածանքը ընդհանուր է, հայերուն և թուրքերուն դէմ միանգամայն: Վիեննայի Բոլիթիշէ Բօրէս-բօնսեննին ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ թէ Թաշ-Գըլա զօրանոցին մէջ պատերազմական ատեան մը կազմուել է Բաշիս փաշայի նախագահութեամբ՝ դատելու համար դաւադրութեան ամբաստանութեամբ վերջերս մայրաքաղաքին մէջ ձերբակալուած բոլոր անձերը: Նոյն թղթակցին խօսքին նայելով, եւրիտասարդ թուրքերու կուսակցութեան շարժումը, որուն կաշակցին եղբր հայ յեղափոխական մասնախումբեր, հետզհետէ կաւերնայ: Զրոյց կայ թէ կայսերական Հարէմէն չորս կիներ են մէջն աքսորուել են: Նոյնպէս կը ծանուցուի բազմաթիւ սպայներու, ուսուցիչներու, փաստաբաններու և ուրիշ թուրքերու ձերբակալումը, որոնք անստորագիր նամակներով մատնանիշ եղած են ոստիկանութեան:

Տեղի Բօնսեննի վիեննայի թղթակցը Կ. Պոլսէն իր առած լուրերուն յենով, կը կարծէ թէ նախարարական փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ:

Տեղի Նիւսի թղթակցը մասնաւորապէս կը հեռագրէ ութ ծանօթ հայերու ձերբակալումը ամսոյ 4ին:

Միւսին Սեֆօյ լրագրին Կ. Պոլսոյ թղթակցը կըսէ թէ վերջին երկու շաբաթներու միջոցին ձերբակալուած հայերուն թիւը հինգ հարիւրը կանցնի:

—Բերայի դեսպանական շրջանակներուն մէջ զանազան մեկնութիւններ կը տրուին գեր-

մանացի Կրումպրօֆ փաշային Պէրլին ուղեւորելուն որ Սուլթանին կողմէ ինքնագիր նամակ մը կը տանի Վիեննա՝ կայսեր: Ճամբան կանգ պիտի առնէ ի Սինայա, երեք օր հիւր մնալու համար Ռումանիոյ թագաւորին. կը կարծուի թէ Կրումպրօֆ փաշա քաղաքական պաշտօն մը ունի կատարելիք այնտեղ. Թուրքիա, առանց դաշնագիր մը կնքած ըլլալու—ինչպէս ծանուցուեցաւ ու հերքուեցաւ—չատ մտերմական յարաբերութիւններ կը տաժէ այս միջոցիս Ռումանիոյ հետ. այս քաղաքականութեան նպատակն է միաբանութեամբ պատուար կանգնել պալքանեան փոքր պետութիւններու խորտակման դէմ:

—Թաշմեզին թղթակցը կը պատմէ թէ Վօլոէն, Լարիսաէն ու Թեսալիոյ ներսերէն վերադարձող ճամբորդի մը հաղորդած տեղեկութիւններուն նայելով, թուրքերը այդ նահանգէն ելլելու պատրաստուողի երեւոյթ չունին ընաւ. վարչական դրութիւնն ամբողջովին կազմակերպելու են Կ. Պոլսէն զրկուած պաշտօնեայնէրով. մինակ դատարաններն հաստատուած չեն տակաւին. Վօլօի մէջ ու չըրջակայները հանդարտութիւն կը տիրէ. Լարիսան խաղաղ է: Օսմ. իշխանութիւնները զինուորական տուրքեր հաստատած են ի Վօլօ և Թեսալիոյ շատ մը կողմերը, որուն դէմ կը բողոքէ հելլէն կառավարութիւնը:

Թուրքերուն Թեսալիայէն ելլել չուզելու տրամադրութիւնը դեսպաններուն ալ ծանօթ է արդէն պաշտօնապէս. ասոնք երբ առաջարկեցին որ Յունաստանի պատերազմական տուգանքը չորս միլիոն ոսկի ըլլայ, տարուէ տարի մէկ մէկ միլիոն վճարելի, Դուռը պատասխանեց թէ այդ պարագային մէջ՝ երրորդ վճարումէն ետքը միայն կը թողու Թեսալիան, այսինքն երեք տարիէն, իսկ Գերմանիան, plus royaliste que le roi, կը պահանջէ տէրութիւններէն՝ հաւանիկ որ Թուրքիան ձեռքէ չի հանէ Թրիխալան, Թուռնալօսը և չըջակայ գաւառակները, մինչեւ որ պատերազմական տուգանքը անբողոքով չի ստանայ:

—Բոնօրէի բարիդեան թղթակցը կը գրէ թէ, Ահմէտ ձեռքաւորին փաշա յայտարարել է ժէժ-Թիւրքի կուսակցութեան պետերուն որ եթէ հնազանդութիւն յայտնելով Պոլիս դառնան, ո՛չ միայն իրենց անձին չի պիտի դաշուի, այլ և պատիւներ պիտի ընծայուին իրենց. ընդհակառակն, եթէ շարունակեն մերժել՝ հալածանք ու խստութիւններ պիտի սաստկանան իրենց ընկերներուն ու գաղափարակիցներուն դէմ: Այս յայտարարութեան վրայ, կուսակցութեան կեդրոնը հաւանք է եղեր ժամանակի մը համար դադար առնել, առանց սակայն բոլորովին անձնատուր ըլլալու: Կուսակցութեան պետը, Մուրատ պէյ, որոշել է ինք անձամբ Կ. Պոլիս վերադառնալ՝ իրեն պատանդ: Թղթակցը իրաւամբ զարմանք կը յայտնէ այս համակերպութեան մասին, «Մուրատ պէյ անտեղեակ չըլլալով որ, կըսէ, եթէ հակառակութիւնները վերսկսին, ինք իր անձը վրայ տալով պիտի տուժէ այս վստահութիւնը որ միամտութեան կը նմանի»:

—Անգլիոյ խորհրդարանին մէջ Պ. Կօլըն՝ հարցման մը պատասխանելով յայտարարել է թէ այս պահու կրէտական ջուրերը գտնուող

յոգնութիւն մը սեպելով միկնելու դասարան երթալ, հեռագրած էր թէ... ծովու քաղնիք մտնելուն չի պիտի կրնար անձամբ պատասխանել դասարանի կոյնագրին, ու աւելցուած էր թէ կը պնդէ իր այն պատմութեան ճշդութեան վրայ—ի մասին կաշառակերութեան առաջարկի մը—որուն արտասպառն դասապարտէր տուաւ այստեղ «Էյ-Մուշիր»ի տետրերը: Իսկ Պ. Բլեմսլուս անձամբ պերճաբան վկայութիւն մը տուաւ ի նպաստ Ահմէտ Բիգա պէյի—«Մեշիքեր»ի խմբագիրը—որուն յորդածներն, ըսաւ, չափաւոր չեղունով մը գրուած են քաղաքական միտքաւարական կարգ մը թերթերու գրածներուն. եւ յետոյ, ի՞նչ հարկ, յարեց, իբրեւ յանցանք մը Ահմէտ Բիգա պէյին վերագրել ինչ որ մեծն Կիսսոսի իր զօրաւոր ու հեղինակաւոր ժայլոյ յայտարարեց՝ Հայաստանի ու Կ. Պոլսոյ կոտորածներուն առթիւ:

Մէշիքերի փաստաբանին պաշտպանողականէն ետք, դասարանը նկատելով որ անբասանեալները (Ահմէտ Բիգա, իր աշխատակիցը Խալիլ Կանեմ ու թերթին արտօնատէր Պ. Հոյեօն) պատուաւոր անձեր են, թէ երկրին օրէնքներէն չեն շեղած եւ թէ քուրթերուն ձեռքով փրկուածներուն ջարդը քուրթ վիճաբանութիւններու առաւելայ եղած է նոյն իսկ Եւրոպայի խորհրդարաններուն եւ ամբողջ աշխարհի մասնաշրջան մէջ, շատցաւ զանոնք դասապարտելով տանը վերադառնալու: Պէտքէն (1) օրէնքին գործադրութեանը, որ կը նշանակէ թէ իրապէս որ եւ է տուգանքի դասապարտուած չեն:

Այս վճիռով ու դասարանին մէջ եղած յայտարարութիւններով, որոնք արձագանգ գտան յազար տասն մէջ՝ անգամ մը եւս կենդանացունելով սխուր ու փսմնելի դէպքերու յիշատակներն հանրութեան մէջին առջեւ, երկասարդ-քուրթերու թերթը քան մը չի կորսնցուց. ընդհակառակը: Իսկ Դուռը ու Բարիկի օսմ. դեսպանատնը պարտաւորութիւն մը կրած եղան պարզապէս:

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԱՏՐԻՏ, 11 օգոստոս. — Պ. Բանովարի սպաննիչը՝ Կօլլի՝ պիտի դատուի զինուորական ատեանի մը առջեւ: Հանգուցեալ նախարարութեան մարմինը Մատրիտ փոխադրուեցաւ ուր հանգիստաւոր արարողութիւն պիտի կատարուի:

ԲԵՂԻՍՊՈՒՐԿ, 12 օգոստոս. — Գերմանիոյ կայսրը ու կայսրուհին մեկնեցան մոտերական ուղևորներ փոխանակելով Զարին ու Զարուհոյն հետ: Ռուս մատուց գահաւանկութիւն կարտայայտէ այս այցելութեան առթիւ, բարենշան համարելով զայն ապագայ խաղաղութեան համար:

Կ. ՊՈԼԻՍ, 13 օգոստոս. — Պարսկաստանէն հայեր թրքական հողը մտան, ինչ որ կը վերագրուի հայ յեղափոխականներու մէկ նոր գործունէութեան:

ԲԱՐԻՉ, 13 օգոստոս. — Օրէնքի Հանրի իշխանը հոս հասնելուն պէս, մենամարտի հրաւիրուեցաւ Ալպերթօնէ զօրաւորին կողմէ՝ Ֆիլիպօի մէջ իր հրատարակած յօդուածներուն համար որով կը նախատէր Հասթէլաստանի իտալացի գերիները:

—Թուրքիի կոմսը Հոսմէն հոս հասաւ ու իր վկայները խրկեց Օրէնքի Հանրի իշխանին: Մենամարտը որոշուած է:

—Ֆրանսա և Սպանիա արտասրտեցին անիշխանականները որոնք Լոնտոն ապաստանեցան:

(1) Մ. Խ. — Պէտքէն օրէնք ըսուածն այն տրամադրութիւնն է որ աւելցած է Նաբոլէոնի Օրէնագրերին վրայ և որուն համեմատ՝ վեհապետներու դէմ գրող եւ խօսող անձ մը պատիժէ գերծ կը մնայ, եթէ իր ամբաստանութիւններ հաստատուի հանրային կարծիքով:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԻՒՆ ԱՐԿԱՆ

Հինգշաբթի օրը երկաթուղիի ահաբեկի արկած մը պատահեցաւ Վերին Եգիպտոսի գծին վրայ։ Միջօրէէն յետոյ Պուլաք-Տարքուլէն մեկնող կառավարման ժամ 4.10ին գծէն դուրս ելաւ Մազկուլուի և Էլ-Այաթի կայաններուն միջև։ Մեքենավարը գտնէ մը և երկու կողմ նշմարելով որոնք երկաթուղիին վրայէն կը քայլէին, ուժգնապէս սուլել տուաւ որպէս զի ձայնէն խրաչելով՝ հեռանան. սակայն իր յայտը ի գերեւ ելաւ. կենդանիները կը մնային գծին վրայ և երբ մեքենավարն ուզեց կառավարման կեցուկէն, այլ եւս ոչ էր. բաղխումը սաստիկ եղաւ, և որովհետեւ զառիվերի մը եզրը կը գտնուէին, քանի մը վակուումներ վար գլորեցան։ Ինք հոգի վայրկեանական կերպով մեռան, որոնց ութը ճանրորդ և մէկը երկաթուղայ գամիսէր Մուհամմէտ Ապտէլ Հաֆիզ էֆէնտի. քսան հոգիի չափ ալ վիրաւորուած կան, որոնց մէջ կը գտնուի մանկամարդ աղջիկ մը որ ֆէյոմի կերթար իր նշանածին քով և որուն երկու ոտքերը ճմլուեցան։

Բարձր. Խտիվը նախընթաց գիշեր Բասէլ-Թինի պալատին մէջ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ Եգիպտոսի անգլ. գրաւիչ բանակին հրամանատար Նօրլա զօրավարին որ հանգըստեան կոչուած է։ Սեղանին մասնակցեցան երեսուն հրաւիրեալներ։

—Ապու-Համատի գրաւման նկատմամբ հասած նորագոյն լուրերուն նայելով, այդ ճակատամարտին մէջ վիրաւորուած երեք սպաները մեռեր են. միւս վիրաւորեալները բժշկուելով վրայ են։ Վատի-Հաֆայէն դէպ ի Ապու-Համատ շինուելով վրայ եղող երկաթուղին փութով առաջ կը տարուի և 123րդ մղոնին հասած է։

—Վաղը Լոնտոնէն Գահիրէ կը հասնի Պ. Ռենէլ Ռօտ որ անգլիական դիւանագիտական գործակաւորի պաշտօնը պիտի վարէ առժամապէս ի բացակայութեան Լորտ Բրոմլի որ սեպտեմբեր 13ին Եգիպտոս կը վերադառնայ։

—Շէյխ Հասան Մուսա-Էլ-Աքարի կողմէ տեղական Սալթանաթ լրագրին գէմ բացուած պատուոյ դատը պիտի տեսնուի ամսոյ 31ին Գահիրէի պատժական առեւին առջեւ։

—Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը որոշած է երկու նոր փակոց (պառած) շինել տալ, մէկը Տամիէթի ճիւղին վրայ և միւսը Ռօզէթի, Կարպիէի, Պէհէրայի և Տաք-հայիէի գաւառակներուն ուղղման համար։

—Նոր կառուցուելով վրայ եղող եգիպտական թանգարանին կազմակերպութեանը համար չորս Եւրոպացի պաշտօնեայներ պիտի հրաւիրուին, 400ական ոսկի տարեթոշակով։

—Պուլաքի բանտը, որ մինչեւ ցարդ կիներու յատկացուած էր, ի մօտոյ զգաստարանի պիտի վերածուի երիտասարդ ստահակներու համար։

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Մեր Պուլկարիոյ, Ռուսմանիոյ և Կովկասի բաժանորդներուն կը ծանուցուի թէ Փարոսը մինչեւ այժմ ուսանական թղթատարով շրջուած ըլլալուն, Տրդ. Թիւէն ետքը անկանոնութիւններ պատահած են ճամբան, (կերեւայ թէ պայուսակներուն մէկ մասը Պուլիս կը մոռցուին) և այսպէս շատերուն հասցէին չէ հասած։

Այսուհետեւ այդ կողմերու բաժանորդներուն Պրինտիֆի ճամբով պիտի ուղարկենք Փարոսը որ ապահովապէս ձեռքերնին հասնի։

Պակաս ստացուած թիւերը պիտի զրկուին փափագ յայտնողներուն։

ՍԵՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Անձնասպանութիւնը այնքան սովորական բան մը դարձաւ, որ տէրութիւնները մասնաւոր պաշտօնատուններ հաստատեցին որոնց գործն է միայն վրձնակալիւր չինել ամեն անոնց որ ապրելու քաջութիւնը չեն ունենար։

Ֆրանսայի մէջ մանաւանդ ամեն օր ինքնասպաններու թիւը աւելնալով վրայ է։

Կիները ասկիւր առաջ շատ հակամէտ չէին իրենց ձեռքով վերջացնելու կեանքերնին, սակայն այսօր գեղեցիկ սեռը տգեղին չափ անձնասպաններ ունի իր մէջ։

Ինքնասպանութեան պատճառներն հետեւեալները եղած են ի Ֆրանսոս անցեալ տարուան շրջանին մէջ։

Թշուառութենէ անձնասպան եղած են 945 հոգի. անգործութենէ, խաղի մէջ կորուստէ և ձախորդութենէ՝ 673. Ընտանեկան վիճերէ՝ 1,021. անպաշտ սէրէ՝ 461, նախանձէ՝ 187, գինեմոլութենէ՝ 1,226, դիւտորական ծառայութենէ՝ զգուսնք՝ 42, ոստիկանութեան ձեռքը խեղափախութենէ՝ 262, ֆիլիքսական տանջանքներէ 1,819, պարտք վճարելու անկարողութենէ 1,533, ուղեղային հիւանդութենէ՝ 1,468, անձանթ պատճառներէ՝ 1,066.

Այդ տիւր որոշումները տուողներն հետեւեալ միջոցներուն զիմած են իրենց նպատակին հասնելու համար։

Բարիօրի մէջ 1895ին մեռած են թոյնով 43, շնչարգելութեամբ 244, խեղդուելով 271, հրագէտով 175, գանակով 10, բարձր տեղէ մը վար նետելով ինքզինքնին 49, և 100 հոգիէ աւելի անձանթ միջոցներով անգլիի աշխարհը զրկած են իրենք զիրենք։

Այս ցուցակին մէջ հաշուի չեն առնուած անոնք որ անկողնի մը մէջ պառկելով, բժիշկի մը կանչած են... ինչ որ անձնասպանութեան ամենէն պատուաւոր եղանակն է։

ԽԱՎԻԱՐԻ ՀԱՆՔ ՄԸ

(ԳԻՒՏ ԱԼՖՅՈՆՍ ԱԼԼԵՒԻ)

Ֆիլիքսական գիտութիւններէ դուրս ալ հրաշալիքներ կան որոնց առջեւ մարդս յապուշ կը կըրթի։ Նոյն ինքն ընտելութիւնը իր վերջին բառը ըսած չէ և անոր մէջ դեռ անսանկ գաղտնիքներ և այն պիտի անակնկալներ կան զոր մեկնել մեր խելքին չէ տրուած։

Մայր ընտելութեան մէջ տակաւին շատ բաներ կան զորս մեր թոռները հազիւ պիտի կրնան տեսնել։ Յարգանքով ողջունելու ենք բաղաքակրթութեան այն ժիր աշխատաւորները որոնք անդորր կեանքի քաղցրութիւններէն հրաժարելով, հազար վտանգ սեռերնին կառնեն նորութիւններ փնտռելու համար աշխարհիս մէկ ծայրէն միւսը։ Աստուծոյն է այս գիւտին հեղինակը։

Ջիօրջանուց Միսիսեմբը կանոնաւորապէս կը կարդաք։ Ձեմ կարծեր. հետեւաբար մեծ կորուստ մը ըրիք չի կարդալով վերոյիշեալ ամերիկեան թերթին յուլիս 1ի թիւը, որուն մէջ նկարագրուած է խալեարի հանքի մը գիւտը որ ըրած է եանքի մը, եթէ երբէք այդ գիւտը չէ ըրած Ալֆոնս Ալլէ, գուարձախօս և մոտայի բրօնիկագիրը։

ԱՁԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն Ռիւթերի հեռագիրը որ Պարսկաստանէն հայերու թրքական հողը անցնելը յեղափոխական մարմիններու գործունէութեան կը վերագրէ, մտահոգութիւն պատճառելու ընտելութիւն ունի և այս վայրկենիս ընդհանուր խօսակցութեան առարկայ է ինչպէս ամեն հայաբնակ կեդրոններու մէջ անշուշտ, նոյնպէս ի Գահիրէ։ Յուզման և արհաւիրքի օրերը պիտի վերսկսին նորէն, —այս հարցումը կուգայ ամեն շրթունքներու վրայ. մանաւանդ որ Պոլսէն հասած լուրերն ալ վարդապետն չեն ու թուրք ոստիկանութեան արտասովոր եռանդը կը ցուցունեն հայերու ձեռքաւորման մասին։ Որոշ ու մանրամասն տեղեկութիւնք կը պակսին սակայն առ այժմ և սպասելով անոնց՝ կը մաղթենք որ այդ վերագործներուն ու ահաբեկիչ լուրերուն մէջ չափազանցութիւն գտնուի. հակառակ պարագային, գիտենք դժբաղդաբար թէ ինչ տխուր կըլլայ անոնց հետեւանքը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Վ. Ա. Ֆօլ Ռիւր (Ամերիկա). — Ձեր նամակը առիք։ Փարոսը այսօրուքնէ կը զրկենք։ Եթէ առաջին թիւէն կուգէք, մեզ իմացուցէք։ money-orderով կրնաք բաժանորդագրութիւնը վճարել։

Կ. Մ. Տ. Աղեքսանդրիա. — Հրեայէ մը խաբուած ըլլալիդ չի գարմացներ զմեզ։ Նորութիւն մը չէ այդ։ Ուշադրութիւն և խոհեմութիւն, լաւագոյն խրատ մը չենք կրնար տալ ձեզի։

Թ. Կ. Գանիք. — Ուր որ կուգէք։

Վ. Ս. Փարիզ. — Ինչո՞ւ չէ։

Օ. Գ. Թիֆլիզ. — Թիւրիմացութեան հետեւանք մ'է այդ։

Ս. Օ. Բեռլին. — Ստացանք ձեր նամակը. տուաւ ջինք ձեռքերնին չէ հասած. յաջորդ թիւով։

Եւ այս գիւտը տարօրինակ չէ: Ասկէ տասը տա-
րի առաջ Մօնթաներ Ռօեօզներու մէջ խողի մսէ
շինուած ուտեստներու ուրիշ հանք մ'ալ գտնուած
է, ինչ որ խալէտորի հանքէն նուազ զարմանալի չէ:
Այս անհաստատալի պատճառները կողմէ՞ք ի-
մանալ: Աւտիկ:

Ամառ օր մը, սաստիկ տաքէ և չորութենէ կրակ
առաւ ութ հարիւր հազար հէքթար տարածութիւն
ունեցող անտառ մը:

Կենդանիներու բազմաթիւ խումբեր կրակէն
փախուտ տարով կը վազէին ապաստանի մեծատա-
րած քարայրի մը մէջ ուր կը կարծէին զովութիւն
և մի և նոյն ատեն իրենց կենսական փրկութիւնը
գտնել:

Խեղճերը կը սխալէին, որովհետեւ ամենքը մի-
ասին մտխէն խեղճամա՜հ մաղմաղ կրակի վրայ
խորովեցան վտանգէն փախուտ տուող այդ ան-
բանները:

Այդ խորոված մսակոյտին շուրջը զաթրինի և
ասոր պէս հոտաւէտ բոյսեր ծելով իրենց անուշա-
հոտութիւնով օծեցին զայն և այդ գիւտներու կու-
տակումէն առաջ եկան ժանկածներ, սօսիւներ և
chareuterieի վերաբերեալ ամեն տեսակ ուտե-
լիք:

Այս ժամուս, միքիւնի (մսի երկիր) այդ հանքը
ընկերութեան մը ձեռքով շահագործուելու վրայ է
և այս պատուական գործին մէկ շահարժէնը որ
շրջապատութեան երեք ատեն 5 տոլար կարծէր, այ-
սօր 170 տոլարի (875 ֆրանք) բարձրացած է:

Հաւանական է որ հոս Զիկատային և Աղբ-
սանդրոյ Մօնթէրաթօյին բով ծախուած jambon-
ները այդ մսահանքէն եկած են:

Խալէտորի հանքին ձեւացումն ալ ոչ նուազ հե-
տաքրորական է: Անմատչելի կղզիի մը մէկ փոքր
ծոյցին մէջ, ասկէ միլիոն տարիներ առաջ էգ ձու-
կեր իրենց հտակիթները կածէին: Երբ ջուրը երբ
կամայ կամայ սկսաւ այդ եզերքներէն քաշուիլ՝ այդ
հտակիթները արեւին ճառագայթներուն տակ մնալով
աղէկ մը եփեցան և փառաւորապէս չորցան, և: Եւ
այսօր այնպիսի հանք մը կը կազմեն զոր հատկէն
գիւրին չէ:

Վճիպի լաւագոյն խալէտորէն տարբերութիւն
չունի այս հանքային խալէտորը. արքայական սեղան-
ներու վրայ իր տեղը պիտի ունենայ անշուշտ Աւ-
ֆօն Ալլէի այս գիւտը:

Քիչ օրէն ընկերութիւն մը պիտի կազմուի որուն
շահարժէնները 25 ֆրանքի շրջապատութեան պիտի
հանուին:

Ահա գործ մը որմէ կրնան օգտուիլ ամեն շա-
հասիրական ընկերութիւններ... Գահիրէիցէն ըս-
կեցով:

Ա Ձ Դ

Ակնաբոյժ՝ Sofpor Էմմէրանի հրահանգի համե-
մաս՝ պատշաճ եմ ամեն առաւօս մինչեւ ժամը 8
ձրիաբար դարմանել այնքի հիւանդները բնակարանիս
մէջ՝ Սեկեղեցի փողոց թիւ 24 սան վերի յարկը:

Դեղագործ
ՍԱՐԳԻՍ ՔԱՂԱՆՃԵԱՆ

Ա Ձ Դ

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կարեւոր քաղի մը
բարձրագոյն վարժարաններէն միոյն մէջ պատշաճ վա-
րած է եւ երկու ամսէ ի վեր քաղաք կը գտնուի, կը
փախալի հայերէնի դասեր տալ տունեւ մէջ այցե-
լուքեամբ:

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժա-
րան կը դրկեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսու-
ցանել տալ կուզեն, առիթէն կրնան օգտուիլ:

Դիմել ՓԱՐՈՍԻ Խմբագրատունը:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մոր-
թի եւ ջղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիւրս Զօքի
հիւրդ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12
եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաս-
տի կը դարմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Խմբագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կատան-
ձնէ յաճախորդներու հաշոյն համար գան-
ձումներ ընել Եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պոլսոյ փողոց Եգիպտական հասարակարան դէմ
Բէսմազօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱՁԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօզպէքիյէ, Պիւլպիւլեանի օթելին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուկէ շապիկներ և այլն սո-
վորական գինեղով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Օմ նիւթ		Էքսորէս		Օմ նիւթ		Էքսորէս		Օմ նիւթ	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	—	—	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	—	—	—	—	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	—	—	—	—	—
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54	—	—	—	—	—
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51	—	—	—	—	—
Աղբ բսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50	—	—	—	—	—

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Օմ նիւթ		Կէս ուղ.		Օմ նիւթ		Էքսորէս		Խառն		Օմ նիւթ		Էքսորէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.
Աղբ բսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	—	—	—	—	—
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	—	—	—	—	—
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—	—	—	—	—
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	—	—	—	—	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	—	—	—	—	—
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	—	—	—	—	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		Երեկոյ		
Զակաղիկ)	ժամ.	1 34	8 54	Խամպիլիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4				
Խամպիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	)	մեկ.	3 17	9 3
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	9 4
				Գահիրէ	ժամ.	5 5	10 35